ԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Կասկածից վեր է, որ վերջերս տեղի ունեցած իրադարձությունները՝ Չեչնիայի նախագահ Ա.Կադիրովի սպանությունը, վրաց–հարավօսական հակամարտությունը, Ինգուշիայում ՆԳ նախարարության վրա գրոհայինների հարձակումը, պայթյունը Մոսկվայի մետրոյի «Ռիժսկայա» կայարանի մերձակայքում, երկու ավիավթարները և Հյուսիսային Օսիայի Բեսլան քաղաքում կատարված ահաբեկչությունը, բաղադրիչներն են մի ծրագրի, որի նպատակն է ապակայունացնել Կովկասյան տարածաշրջանը: Միևնույն ժամանակ զարգացումներն այդ տարածաշրջանում այս կամ այն չափով առնչվում են հետխորհրդային այլ տարածաշրջաններում ընթացող քաղաքական գործընթացների հետ:

Հարավային Կովկաս և Մերձդնեստր

Վրաստանի իշխանությունների՝ «հակամարտությունները լճացումից դուրս բերելու» կոչերը հավելյալ լարվածություն առաջացրեցին Հարավային Կովկասում, որտեղ արդեն նկատվում են ռազմականացման գործընթացներ: Նշենք, որ միայն հուլիս-օգոստոս ամիսներին Կովկասում անցկացվեցին յոթ զորավարժություններ:

Լարվածության հերթական ալիքը բարձրացավ Աբխազիայում, որտեղ կրկին սրվեցին վրաց-աբխազական հարաբերությունները՝ ի հավելումն վրաց-հարավօսական հակամարտությանը զուգընթաց: Աբխազիայում կազմակերպվեցին լայնածավալ զորավարժություններ, իսկ հուլիսի 26-ին այդ հանրապետության ղեկավարությունը հանդես եկավ վրաց-աբխազական հակամարտության կարգավորման բանակցությունները դադարեցնելու հայտարարությամբ: Առիթ էր հանդիսացել վրացի սահմանապահների կողմից Սուխում գնացող թուրքական առևտրական նավերի ուղղությամբ կրակ բացելը:

Միջադեպի առնչությամբ ԶԼՄ-ներում ի հայտ եկան լուրեր այն մասին, թե հարավօսական ճակատին զուգահեռ բացվում է նաև երկրորդ՝ աբխազական ճակատը: Հարավային Օսիայի (ՀՕՀ) նախագահ Էդ.Կոկոյտին հանդես եկավ ռազմական համագործակցության ոլորտում Աբխազիայի, Հարավային Օսիայի, Մերձդնեստրի և Լեռնային Ղարաբաղի ղեկավարների պայմանավորվածությունների մասին հայտարարությամբ՝ ըստ երևույթին փորձելով վրաց-հարավօսական հակամարտության մեջ ներքաշել նաև նրանց: Նման համաձայնություն գոյություն ունի Աբխազիայի, ՀՕՀ և Մերձդնեստրի մի-

ջև: Սակայն Լեռնային Ղարաբաղի ղեկավարությունը խնդրին զուսպ է մոտենում: Ս.թ. մայիսի վերջին ՀՕՀ-ում կայացած խորհրդարանական ընտրություններին ԼՂՀ-ն, ի տարբերություն Աբխազիայի, Հյուսիսային Օսիա-Ալանիայի և Մերձդնեստրի իշխանությունների, անգամ դիտորդական պատվիրակություն չէր առաքել:

Ներքաղաքական լարվածություն նկատվեց Վրաստանին սահմանակից Կաբարդի-նա-Բալկարիայում, որտեղ ս.թ. օգոստոսի 19-ին վահաբական գրոհայինների և տեղական ոստիկանության միջև զինված բախում տեղի ունեցավ, ինչը կրկին վկայում է այն մասին, որ Կովկասում այսօր հակամարտության գոտիների լարվածությունը վերսկսվում է:

Ըստ ամենայնի, «հակամարտությունները լճացումից դուրս բերելու» կոչերը, վրաց-հարավօսական հակամարտությունը բացասաբար են անդրադառնում հայ-ադրբեջանական հարաբերությունների վրա: Հայաստանի ԱԳ նախարար Վ.Օսկանյանը օգոստոսի 19-ին ղարաբաղյան հարցի կարգավորման հեռանկարների շուրջ Երևանում հանդես եկավ բավական կտրուկ հայտարարությամբ, մասնավորապես. *«Լեռնային Ղարաբաղը երբեք չի լինելու Ադրբեջանի կազմում*, իսկ *Ստեփանակերտը չի ենթարկվելու Բաքվին»*: Իրադրությունը սրվեց նաև հայ-ադրբեջանական սահմանային գծի որոշ հատվածներում, մասնավորապես՝ Տավուշի մարզի սահմանային Բերքաբեր գյուղի շրջանում, որտեղ սահմանային լարվածությունը տևեց գրեթե երկու ամիս՝ հաճախակի ընթացող փոխհրաձգություններով: Լարվածություն առաջացավ Լեռնային Ղարաբաղի ու Ադրբեջանի հարաբերություններում՝ կապված օգոստոսի 3-10-ն ընկած ժամանակահատվածում Լեռնային Ղարաբաղում անցկացված ԼՂՀ պաշտպանության բանակի լայնածավալ հրամանատարական-շտաբային զորավարժությունների հետ:

Իրադրությունը բավական բարդացավ մեկ այլ հակամարտության գոտում՝ Մերձդնեստրում: Մասնավորապես, սրվեցին Մոլդովայի և Մերձդնեստրի հարաբերությունները՝ կապված վերջինիս իշխանությունների կողմից ռումիներեն թեքումով ութ դպրոցներից չորսի փակման հետ (ի դեպ, Մոլդովայի բնակչության շուրջ 40%-ը Ռումինիայի քաղաքացիներ են): Սրան Մոլդովայի ղեկավարությունը պատասխանեց Մերձդնեստրում գործող տնտեսական սուբյեկտների հետ համագործակցության դադարեցմամբ: Արդյունքում՝ Մերձդնեստրի իշխանությունները շրջափակեցին երկաթգիծը: Նշենք, որ Ռուսաստանն ու Ուկրաինան Բենդեր քաղաքով (Դնեստրի ափին գտնվող երկաթուղային հանգույց է) են իրականացնում երկաթուղային հաղորդակցումը ոչ միայն Մոլդովայի, այլև՝ Ռումինիայի ու Բուլղարիայի հետ:

Հայ-ռուսական հարաբերությունների շուրջ[1]

Հարավկովկասյան վերջին զարգացումները ցույց են տալիս, որ Մոսկվան ավելի շատ պետք է զգա Հայաստանի հետ դաշինքի ամրապնդման անհրաժեշտությունը: Տարածաշրջանում տեղի են ունենում այնպիսի գործընթացներ, որոնք կարող են վտանգել նաև Հայաստանի անվտանգությունը (Վրաստանի նախագահի՝ «հակամարտությունները լճացումից դուրս բերելու» կոչերը, Հարավային Կովկասում վրաց-ադրբեջանական կողմերի՝ պետահիրավական լիազորությունների հարցերում ունեցած ընդհանուր շահերը, ռուսական ռազմակայանների հարցի շահարկումը և այլն):

Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել ս.թ. օգոստոսի երկրորդ կեսին Ադրբեջանի ԱԳ նախարար Էլմար Մամեդյարովի Մոսկվա կատարած այցին: Երկկողմ բանակցությունների ընթացքում քննարկվեցին ռուս-ադրբեջանական հարաբերությունները, Լեռնային Ղարաբաղի խնդիրը (ադրբեջանական կողմը շեշտեց Լեռնային Ղարաբաղի հակամարտության *«լճացումից դուրսբերման» անհրաժեշտությունը,* որ դարձել է կարգախոս Վրաստանի և Ադրբեջանի իշխանությունների համար), նավթային ու տրանսպորտային խնդիրներ: Բանակցությունների ընթացքում Ադրբեջանի ԱԳ նախարարը չբացառեց Ադրբեջանում ամերիկյան հավանական ռազմական ներկայության հարցը՝ շեշտելով ահաբեկչության դեմ պայքարի անհրաժեշտությունը և երկրում ահաբեկչական 32 գործողությունների իրագործման փաստը:

Պուտին-Քոչարյան հանդիպումը

Օգոստոսի երկրորդ կեսին Սոչիում ՌԴ նախագահ Վ.Պուտինը հանդիպում ունեցավ ՀՀ նախագահ Ռ.Քոչարյանի հետ: Տնտեսական ու քաղաքական խնդիրներից զատ՝ քննարկվեցին Ռուսաստանի ռազմական բուհերում հայ սպաների ուսուցանման հարցերը, որոնց ուսումնառության համար հատկացվելու է 143-150 տեղ:

Ներկայում Ռուսաստանը ԱՊՀ երկրների հետ հարաբերություններում կարևորագույն տեղ է հատկացնում Հայաստանին: Սրա վկայությունն է այն, որ Սոչիում Վ.Պուտինը Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կուչմային ընդունելուց հետո հանդիպեց Ռ.Քոչարյանի հետ: Ասել է թե՝ եթե ԱՊՀ պետությունների շարքում Ուկրաինան Ռուսաստանի շահերի տեսանկյունից արևմտյան ուղղության առանցքային երկրներից մեկն է, ապա Հայաստանն էլ նրա հարավային ռազմավարական դաշնակիցն է:

[1] «Վերին Լարս» անցակետի շուրջ ի հայտ եկած իրավիճակի մասին տե՛ս «Իրավիճակը Հյուսիսային Կովկասում. մարտավարական և ռազմավարական հետևություններ»-ում:

Վրաց-հարավօսական հակամարտության շուրջ

Վրաց-հարավօսական հակամարտության գոտում փոխադարձ սադրանքներն ու փոխհրաձգություններն արդեն գրեթե սովորական երևույթ են դարձել: Թեև ռազմական գործողություններին զուգահեռ ընթանում են հակամարտության կարգավորման բանակցություններ, այսուհանդերձ, դրանք դեռևս անարդյունավետ են:

Վրաստանի ղեկավարության՝ հարավօսական կողմի դեմ ձեռնարկած լայնածավալ ռազմական գործողությունները կարող են խարխլել Մ.Սահակաշվիլու դիրքերն իր իսկ երկրում, քանի որ Վրաստանի բնակչությունը դեռևս չի հաղթահարել 1990-ական թթ. սկզբին վրաց-հարավօսական հակամարտության ժամանակ վրացական կողմի կրած պարտության բարդույթը և վրացիներն այսօր պատրաստ չեն կրկին կռվել ՀՕՀ-ի դեմ: Բացի այդ, երկրի ղեկավարության առջև ծառացել է դեռևս լուծում չստացած սոցիալ-տնտեսական բարեփոխումների հարցը, իսկ բնակչության զգալի մասի սոցիալական պայմանները շարունակում են մնալ ծանր:

Վրաստանում վեջին երկու ամիսների ընթացքում բավականին ակտիվացել է գործող վարչակարգին ընդդիմադիր, դեռևս չհամախմբված դաշտը: Վրաստանի լեյբորիստական և հանրապետական կուսակցությունների ղեկավարները քննադատաբար են մոտենում Մ.Սահակաշվիլու վարած ներքին քաղաքականությանը: Հանրապետական կուսակցության առաջնորդ Դավիթ Բերձենիշվիլին, որը գործող իշխանությունների հետ հակասություններ ունեցավ դեռևս Աջարիայի Ինքնավար Հանրապետության Գերագույն խորհրդի ընտրությունների ընթացքում, վերջերս հանդես եկավ Մ.Սահակաշվիլու հրաժարականի անհրաժեշտության մասին հայտարարությամբ:

Իր հերթին՝ երկրի ղեկավարությունը նախատեսում է վրաց-հարավօսական լարվածության չեզոքացման նպատակով գերտերությունների ղեկավարների մակարդակով *միջազգային համագումար* հրավիրել: Ի դեպ, պաշտոնական Մոսկվան կտրականապես դեմ է նման համագումարի անցկացմանը՝ պատճառաբանելով, որ «միջազգային համաժողովները հրավիրվում են միայն այն ժամանակ, երբ գոյություն չունեն հարցերի կարգավորման այլ մեխանիզմներ, կամ եթե դրանք գոյություն ունեն, բայց չեն գործում»:

Վրաց-հարավօսական հակամարտությունն ի սկզբանե վերաճեց ռուս-վրացական շահերի բախման: Այդ շրջանի՝ Թբիլիսիի վերահսկողությանն ինտեգրվելուն խոչընդոտում են մի շարք հանգամանքներ, ինչպես, օրինակ, վրացի և օս ժողովուրդների տարբերությունը, Վրաստանի և ինքնավարության պատմական հակամարտությունները, վերջինիս ներառումը ռուսական տնտեսական տարածք և Ռուսաստանի հետ ընդհանուր սահմանը: Բացի այդ, ՀՕՀ բնակչության գերակշիռ մասը (շուրջ 80%) Ռուսաստա-

նի քաղաքացիներ են (այդ թվում և ՀՕՀ նախագահ Էդ.Կոկոյտին)։ Ռուսաստանի կողմից արտոնագրային պայմանակարգի կիրառումը Վրաստանի քաղաքացիների նկատմամբ և Հարավային Օսիայի բնակիչներին ազատ մուտքի արտոնումը խթան հանդիսացան, որպեսզի վերջիններս է՛լ ավելի ինտեգրվեն ներռուսաստանյան տնտեսական ու սոցիալական գործընթացներին։

Վրաստանի իշխանությունները, Հարավային Օսիայում տեղակայված ռուսական խաղաղապահ ստորաբաժանումները նոր ձևաչափով փոխարինելու նպատակով, ձգտում են հարցը լուծել ավելի շուտ Խառը վերահսկիչ հանձնաժողովի (ԽՎՀ) շրջանակներից դուրս՝ դրանով իսկ նպատակ հետապնդելով անուղղակիորեն հարվածել Վրաստանում ռուսական դիրքերին։ Դեռևս հուլիսի 21-ին կայացած ԽՎՀ հերթական նիստին մասնակցում էին ոչ թե համանախագահները, ինչպես դա տեղի էր ունենում մինչ այդ, այլ՝ կողմերի պատվիրակությունների քարտուղարները, ինչը վկայում է կողմերի բանակցությունների անարդյունավետության մասին։ Ավելին, Մ.Սահակաշվիլին վերջերս հանդես եկավ 1992թ. դագոմիսյան համաձայնություններից (ըստ 1992թ. հունիսի 24-ին Դագոմիսում կնքված պայմանագրի, հակամարտության գոտում վերահսկողությունը սկսեցին իրականացնել Խաղաղության աջակցման խառը ուժերը՝ ռուսական, վրացական և օսական զումարտակները (ընդհանուր թվաքանակը՝ 1 500 հոգի)՝ Վրաստանի դուրս գալու մասին հայտարարությամբ։ Դագոմիսյան պայմանավորվածությունները չեղյալ հայտարարելով՝ Վրաստանի ղեկավարությունը հարցականի տակ է դնում հակամարտության գոտում տեղակայված ռուս խաղաղապահ ուժերի ներկայության հարցը։

Պաշտոնական Թբիլիսին տարածաշրջանում ռուսական ազդեցության թուլացման նպատակով ավելի է ուժեղացնում միջազգային հանրության ճնշումները ռուսական կողմի վրա։ Հավանաբար դրանով էր պայմանավորված Վրաստանի շրջակա միջավայրի հարցերով նախարար Թամարա Լեբանիձեի՝ Բորժոմի մոտակայքում Բաքու-Ջեյհան նավթամուղի շինարարության դադարեցման մասին հայտարարությունը։ Նա պատճառաբանում էր, թե *British Petroleum* նավթային կոնցեռնը չի հետևում շրջակա միջավայրի պահպանության նորմերին։ Եթե հաշվի առնենք վերջերս Մ.Սահակաշվիլու՝ Լոնդոն կատարած այցը, վրաց-հարավօսական հակամարտության հարցում ռուսական կողմի վրա ճնշումներ գործադրելու նրա կոչերը, պարզ է դառնում, որ պաշտոնական Թբիլիսին փորձում է հակամարտությանը ներքաշել ԱՄՆ-ին և Մեծ Բրիտանիային՝ շահարկելով Բաքու-Ջեյհան նավթամուղի շինարարությունը։

Վրաց-հարավօսական հակամարտության գոտին

Մոսկվան, իր հերթին, հարավկովկասյան տարածաշրջանում ամուր հենակետեր պահպանելու համար, ամենայն հավանականությամբ, փորձում է ռազմական գործողություններ հրահրել վրաց-հարավօսական հակամարտության գոտում: Ի դեպ, Ռուսաստանի ղեկավարությունն արդեն այդ ուղղությամբ քայլեր ձեռնարկում է: Ռուսաստանից զրահատեխնիկայի՝ 18 զրահափոխադրիչների (ԶՓ) և 22 հետևակի մարտական մեքենաների (ՀՄՄ) առաքումը Հարավային Կովկաս հետապնդում էր մեկ նպա-

տակ՝ զինել հարավօսական կողմին։ Դա է վկայում այն, որ ԽՎՀ Ռուսաստանի, Վրաստանի ու Հյուսիսային Օսիայի կառավարական բարձրաստիճան ներկայացուցիչների՝ 1994թ. դեկտեմբերի 6-ին ընդունած որոշման համաձայն, հակամարտության գոտում խաղաղապահ ուժերի տեղաբաշխման սխեման նախատեսում էր ձևավորել 25 հսկիչ պահակակետ, որոնցից 7-ը պատկանում էին ռուսական կողմին, 9-ը՝ վրացական և 9 պահակակետ էլ՝ հյուսիսօսական խաղաղապահ ուժերին, իսկ հարավօսական գումարտակ ընդհանրապես այս կառույցում գոյություն չունի։ Մինչդեռ ռուսական կողմը հավաստիացնում էր, թե զրահատեխնիկան ուղարկվել է «Խաղաղության աջակցման խառը ուժերի» *հարավօսական* գումարտակի հնացած զրահատեխնիկան թարմացնելու նպատակով։

Եթե Կրեմլը աջարական հիմնախնդրի դեպքում կիրառում էր միայն քաղաքական տեխնոլոգիաներ, ապա աջարական ճգնաժամից հետո՝ նա քաղաքական ազդակներին համադրում է նաև տնտեսական «պատժամիջոցները»։ Վերջերս «Գազարդը» կրճատեց Վրաստանի մայրաքաղաք բնական գազի առաքման ծավալները՝ օրական 370 հազ. խոր./մ-ից հասցնելով մինչև 230. հազ. խոր./մ-ի։ «Գազարդի» ղեկավարության պնդումների համաձայն, բնական գազի առաքման ծավալի կրճատման պատճառ է հանդիսացել շուրջ $500 հազ. գումարի ընթացիկ պարտքը։ Թբիլիսիում գազի ծավալի կրճատումը պայմանավորում են Մ.Սահակաշվիլու՝ դագոմիսյան համաձայնագրերից դուրս գալու հայտարարությամբ։

Օգոստոսի երկրորդ կեսին, հակամարտության գոտում իրադրության կտրուկ սրման պայմաններում, պաշտոնական Թբիլիսին, հանդիպելով հարավօսական կողմի համառ դիմադրությանը, չնայած շարունակում է կողմնակալության մեջ մեղադրել պաշտոնական Մոսկվային, այդուհանդերձ, որոշակիորեն մեղմել է բացասական նախատրամադրվածությունը ռուսական կողմի հանդեպ։ Որպես փաստարկ՝ կարելի է մեջբերել հակամարտության սկզբին Մ.Սահակաշվիլու արած այն հայտարարությունը, թե «թույլ չի տա, որ Վրաստանի թեկուզև մեկ քաղաքացի զոհվի *ռուսական զենքից*»։ Իսկ օգոստոսի երկրորդ կեսին երկրի ղեկավարությունը, այնուամենայնիվ, այնքան էլ խիստ չընդունեց փոխհրաձգությունների արդյունքում վրացի 16 զինծառայողների սպանության փաստը։ Վրաց-հարավօսական հակամարտության գոտում, մասնավորապես՝ Ջավայի բարձունքներում, ռազմական գործողությունների ընթացքում վրացի ուժայինների կրած պարտությունը հարկադրեց պաշտոնական Թբիլիսիին երկրի ուժային տեսչություններում *որոշակի* փոփոխություններ իրականացնել։ Նախ՝ պաշտոնից ազատվեց երկրի ԶՈՒ Գլխավոր սպայակույտի ղեկավարը, այնուհետև Մ.Սահակաշվիլին

հանդես եկավ երկրի ներքին գործերի նախարարության լուծարման և այն պաշտպանության նախարարության Գլխավոր սպայակույտի ենթակայության տակ դնելու մասին հայտարարությամբ (երկրի ուժային կառույցների համակարգը *ՆԱՏՕ-ի չափանիշներին* համապատասխանեցնելու պատճառաբանությամբ)։ Նախատեսվում է, որ ուժային վերադասավորման գործընթացը կավարտվի մինչև ս.թ. նոյեմբերի 1-ը։

Ռուս-վրացական հարաբերություններն ավելի լարվեցին Բեսլանի ահաբեկչությունից հետո։ Ռուս բարձրաստիճան պաշտոնյաները չեն թաքցնում, որ պաշտոնական Մոսկվան հյուսիսկովկասյան տարածաշրջանում անմիջական սպառնալիք տեսնում է ոչ միայն Հյուսիսային Օսիայի հարևան դաշնային հանրապետություններում, այլ նաև Ռուսաստանի հարավային սահմաններում։ Ուստի սպասելի էր, որ Կրեմլը սեպտեմբերի սկզբից աննախադեպ կարգով խստացրեց ռուս-վրացական և ռուս-ադրբեջանական սահմանային անցակետերը։ Սահմանափակվել է մարդկանց ու փոխադրամիջոցների երթևեկը «Յարագ-Կազմալյար», «Տագիրքենդ-Կազմալյար», «Նովոֆիլյա» և «Գարախ» անցագրային կետերով։ Վերջին հսկիչ-անցագրային կետից թույլատրվելու է անցնել միայն դպրոց հաճախող երեխաներին և այն անձանց, որոնք գնում են աշխատանքի։ Մյուս անցագրային կետերում թույլատրվելու է սահմանը հատել միայն Ռուսաստանի ու Ադրբեջանի՝ հայրենիք վերադարձող քաղաքացիներին։ Ինչ վերաբերում է ռուս-վրացական սահմանին, ապա այստեղ սեպտեմբերի սկզբից դադարեցվել են ավտոմեքենաների փոխադրումները։

Պաշտոնական Մոսկվան նախատեսում էր նաև հոկտեմբերի 1-ից իր օդային տարածքը փակել վրացական ավիաընկերությունների համար, սակայն մեկ շաբաթ անց ռուսական կողմը որոշում կայացրեց առժամանակ վերացնել օդային տարածքի սահմանափակումները, քանի որ, ըստ որոշ տվյալների, վրացական ավիաընկերությունները և իշխանությունները համաձայնել են մարել ռուսական կողմին իրենց ունեցած պարտքերը։ Ռուսաստանի և Վրաստանի ավիաընկերությունների ղեկավարությունների միջև հաջորդ բանակցությունները տեղի կունենան ս.թ. նոյեմբերի 1-ին։

Ռուս-վրացական հարաբերությունները հավելյալ սրվեցին Սուխում-Մոսկվա երկաթգծի վերաբացմամբ, որը գրեթե 12 տարի չէր շահագործվում։ «Ռուսական երկաթուղային ճանապարհներ» ընկերության տնօրեն Գենադի Ֆադեևի խոսքերով, «ողջ Կովկասի կենդանացումն առաջին հերթին կայանում է բոլոր ճանապարհների ապաշրջափակման մեջ. Աբխազիայի տարածքով ճանապարհն անցնում է դեպի Հայաստան, Վրաստան, Ադրբեջան»։

ԵՄ-ը, Ուկրաինան, Թուրքիան պատրաստակամ են ներգրավվել վրաց-հարավօսական հակամարտությանը

Ի սկզբանե, հակամարտությանը ներքաշվել են ոչ միայն Ռուսաստանն ու ԱՄՆ-ը, այլև ԵՄ-ը: Բազմիցս արծարծվում են վրաց-հարավօսական հակամարտության գոտում տեղակայված ռուս խաղաղապահների կողմնակալության, Ռոքիի թունելի շրջանում ԵԱՀԿ ռազմական դիտորդների վերահսկողության սահմանման անհրաժեշտության մասին կոչերը: Վրաստանի ղեկավարության համար Ռոքիի թունելում վերահսկողության հաստատումը կարևոր ռազմավարական նշանակություն ունի, քանի որ այն միակ տրանսպորտային ուղին է, որ կապում է Հարավային Օսիան Ռուսաստանին: Պաշտոնական Թբիլիսին առաջ քաշեց նաև Վրաստանում ԵԱՀԿ առաքելության մանդատի երկարաձգման հարցը: Խոսքը մասնավորապես վերաբերում է Ցխինվալի շրջանում մոնիթորինգի անցկացմանն ու Ռոքիի թունելում դիտորդական խմբի հաստատմանը: Ընդ որում, ԱՄՆ-ը կողմ է Վրաստանում ԵԱՀԿ ռազմական դիտորդների թվաքանակի ավելացմանն ու շրջանում այս կառույցի կողմից իրականացվող մոնիթորինգի կազմակերպմանը:

Վրաց-հարավօսական հակամարտության սրացումն այս կամ այն չափով կապված է նաև մերձդնեստրյան խնդրի հետ, ուստի և տվյալ դեպքում, այլ գլոբալ շահերից բացի, այս համատեքստում ևս շոշափվում են Ուկրաինայի շահերը: Ս.թ. օգոստոսի սկզբներին Մոլդովայի կառավարության՝ Մերձդնեստրի տնտեսավարող սուբյեկտների բեռների մաքսային ձևակերպումը դադարեցնելու մասին որոշումը բարդացնում էր Ուկրաինայի ու Մոլդովայի մաքսային ծառայությունների միջև ձեռք բերված համաձայնությունների իրագործումը: Անցագրային կետերում տրանսպորտային միջոցների զգալի մասի կուտակումը, ուկրաինա-մոլդովական սահմանի մերձդնեստրովյան հատվածում նրանց տեղաշարժվելու հետ կապված խնդիրները կհանգեցնեին բավականին լուրջ սոցիալ-տնտեսական խնդիրների: Մերձդնեստրում են բնակվում շուրջ 200 հազ. էթնիկ ուկրաինացի և Ուկրաինայի Հանրապետության տասնյակ հազարավոր քաղաքացիներ: Ուկրաինայի կառավարությունը բացասաբար է մոտենում Մոլդովայի իշխանությունների որոշմանը, քանի որ այն ընդունվել է առանց Ուկրաինայի հետ խորհրդակցելու, մանավանդ որ վերջինս մերձդնեստրովյան հակամարտության միջնորդ կողմ է:

Վերջերս Ուկրաինայի ղեկավարությունը հանդես եկավ հայտարարությամբ՝ ՀՕՀ և աբխազական հակամարտությունների կարգավորման հարցում միջնորդ հանդես գալու առաջարկությամբ: Պաշտոնական Կիևն իր անհանգստությունն է հայտնում վրաց-հարավօսական հակամարտության սրման կապակցությամբ՝ կոչ անելով Վրաստանի տարածքային ամբողջականության ճանաչման հիման վրա հակամարտությունը կար-

գավորել խաղաղ ճանապարհով: Ուկրաինայի իշխանությունները կողմ են հանդես գալիս նաև Վրաստանում միջազգային կազմակերպությունների՝ այդ թվում ԵԱՀԿ-ի, դիտորդների թվի ավելացմանը, ինչպես և նրանց գործունեության ընդարձակմանը:

Հարավկովկասյան գործընթացներին փորձում է ավելի ակտիվորեն ներգրավվել Թուրքիան՝ ՆԱՏՕ-ի առանցքային անդամ-երկրներից մեկը: Դեռևս ս.թ. օգոստոսի կեսերին Թուրքիան պատրաստակամություն հայտնեց ընդգրկվել Վրաստանում խաղաղապահ ուժերի «միջազգայնացման» գործընթացին՝ դրանով իսկ Հյուսիսատլանտյան դաշինքին ներքաշելով վրաց-հարավօսական հակամարտության մեջ:

ԱՄՆ դիրքորոշումը վրաց-հարավօսական հակամարտության վերջին զարգացումների նկատմամբ

Ս.թ. օգոստոսի կեսերին Հարավային Օսիա առաջին անգամ այցելեց ԱՄՆ կոնգրեսականների օգնականներից բաղկացած խումբը, որոնց ընդունել են ՀՕՀ խորհրդարանի նախագահ Զնաուր Գասիևը և հատուկ հանձնարարությունների գծով նախարար Բորիս Չոչիևը, իսկ օգոստոսի երկրորդ կեսին նախատեսվում էր Վրաստանում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Մայլզի այցը Ցխինվալ:

Վրաց-հարավօսական հարաբերությունների սրացման սկզբից ԱՄՆ իշխանությունները հանդես էին գալիս հիմնականում ոչ թե ՀՕՀ ղեկավարության, այլ՝ Վրաստանում տեղակայված ռուս խաղաղապահների գործունեության դեմ: Հակամարտության հետագա ծավալման ընթացքում ամերիկյան դիվանագետներն ընդունեցին հակամարտությունում *Ռուսաստանի կարևոր դերակատարությունը և* փորձում են ռուս-վրացական հարաբերություններում հանդես գալ ավելի շուտ *միջնորդի* կարգավիճակով: Այս առումով ուշագրավ էր վերջերս Սպիտակ տան՝ ամերիկյան ռազմական ուժերի վերատեղակայման մասին ներկայացրած զեկույցը, որտեղ մասնավորապես նշվում էր, թե ԱՄՆ-ը մտադիր է Եվրոպայից, հիմնականում Գերմանիայից դուրս բերել իր զորամիավորումները (որոնք այլևս չեն համապատասխանում առկա մարտահրավերներին), 21-րդ դարի սպառնալիքներին դիմագրավելու նպատակով ռազմական ուժեր տեղակայել ՆԱՏՕ-ի նորանդամ, ինչպես և ԱՊՀ որոշ երկրներում, որոնց թվում, փաստորեն, հարավկովկասյան երկրներն են՝ Վրաստանը և Ադրբեջանը:

Ինչ վերաբերում է Կենտրոնական Ասիային, ապա դեռևս 2001թ. հոկտեմբերին ամերիկյան ռազմակայանները հայտնվեցին Ուզբեկստանում (Խանաբադ) ու Ղրղզստանում (Մանաս): Ամերիկյան նոր քաղաքական ու ռազմական վերադասավորումները ենթադրում են «առաջավոր տեղակայման» ուժերի առկայություն, որոնք ի վիճակի

կլինեն կարճ ժամանակահատվածում ներգրավվել Եվրոպայում և նրա սահմաններից դուրս ցանկացած հակամարտության գոտում:

Պետք չէ բացառել, որ Պենտագոնի իրականացրած վերադասավորումների արդյունքում Վրաստանում հայտնված ամերիկյան զորքերը կարող են լրացուցիչ սրացումների պատճառ հանդիսանալ վրաց-հարավօսական հակամարտության գոտում: Թերևս, պետք չէ բացառել նաև հակառակը՝ ամերիկյան զինուժի ներկայությունը կարող է կայունացնող ազդեցություն ունենալ:

Միխայիլ Սահակաշվիլու այցը Միացյալ Նահանգներ

Ս.թ. հուլիսի սկզբին Վրաստանի նախագահ Մ. Սահակաշվիլին ոչ պաշտոնական այցով մեկնեց Միացյալ Նահանգներ: Նա հանդիպումներ ունեցավ ԱՄՆ պետքարտուղար Քոլին Փաուելի, պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդի և ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության գծով խորհրդական Կոնդոլիզա Ռայսի հետ: Այցը համընկավ ռուս-վրացական հարաբերությունների հերթական սրացման հետ: Վերլուծաբաններից շատերի կարծիքով, այցի նպատակը ՀՕՀ-ի և Աբխազիայի հիմնախնդիրների շուրջ Թբիլիսիի ու Մոսկվայի հարաբերությունների լարվածության պայմաններում Վաշինգտոնի աջակցությունն ստանալն էր: Սակայն, թերևս, ԱՄՆ ղեկավարությունը Վրաստանի նախագահի խնդրանքին բավական զգույշ մոտեցել՝ կողմերին կոչ անելով տարաձայնությունները հարթել միայն դիվանագիտական ճանապարհով:

Մ.Սահակաշվիլին օգոստոսի 5-ին՝ պետքարտուղար Ք.Փաուելի հետ հանդիպումից հետո, հայտարարեց, թե «վրացական կողմը իրադրության կայունացման և ռուսական կողմի հետ երկխոսության շարունակման հույս ունի և չի ցանկանում հակամարտության մեջ մտնել վերջինիս հետ»: Պարզվեց, որ ԱՄՆ նախագահ Ջ.Բուշ-կրտսերի վարչակազմի դիվանագիտական կարևոր նպատակներից է Ռուսաստանի հետ հարաբերությունների «փափկացումն» ու բարելավումը: Պաշտոնական Վաշինգտոնը Վրաստանի իշխանություններին հավաստիացրեց, որ Միացյալ Նահանգների ազգային շահն այսօր պահանջում է ավելի շուտ հարթել հակասությունները ՌԴ-ի հետ, քան ողջունել Վրաստանի ղեկավարության որդեգրած հարձակողական մարտավարությունը: Ռուսաստանում ԱՄՆ դեսպան Ալեքսանդր Վերշբոուն ս.թ. սեպտեմբերի 9-ին Կրասնոյարսկում իր ելույթի ժամանակ մասնավորապես նշեց. «ԱՄՆ-Ռուսաստան համագործակցությունն արտացոլում է այն փաստը, որ այսօր ռուսներն ու ամերիկացիները քիչ ընդհանուր շահեր չունեն, և *դրանք ավելի կարևոր են, քան այն հարցերը, որոնց շուրջ մենք համաձայնության չենք գալիս*»: Այս առումով բավական ուշագրավ էր Վրաս-

տանում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Մայլզի հայտարարությունը (սեպտեմբերի երկրորդ կես), թե «Պանկիսի կիրճի շրջանում դեռևս գտնվում են մի քանի միջազգային ահաբեկիչներ ու որոշակի քանակությամբ չեչեն գրոհայիններ»: ԱՄՆ դեսպանն այս հայտարարությամբ կրկին ընդգծեց վրաց-ամերիկյան տարաձայնությունները: Փաստը, որ Ռ.Մայլզին (որը ներկա էր գտնվում Վրաստանի ազգային անվտանգության խորհրդի գրեթե բոլոր նիստերին) այդ հայտարարությունից հետո իր մոտ կանչեց ոչ թե տվյալ Վրաստանի արտգործնախարարը, ինչպես դա ընդունված է, այլ Վրաստանի վարչապետ Զ.Ժվանիան, խոսում է ամերիկյան դեսպանի *հատուկ առաքելության*, ԱՄՆ որոշակի շահերի մասին: Պարզ է, որ գլոբալ շահերի համատեքստում նման մակարդակի հայտարարությունները չեն կարող լեզվի սայթաքումներ կամ *թյուրիմացություններ* լինել:

Հայտարարության պարզաբանման նպատակով Զ.Ժվանիան հեռախոսազրույց ունեցավ ԱՄՆ պետքարտուղարի առաջին տեղակալ Ռիչարդ Արմիթեյջի հետ, որից հետո ԱՄՆ պետքարտուղարության խոսնակ Ռիչարդ Բաուչերը հանդես եկավ պաշտոնական հայտարարությամբ, թե ԱՄՆ, Ռուսաստանի և Վրաստանի համատեղ ջանքերի շնորհիվ հաջողվել է ամբողջությամբ լուծել Պանկիսի կիրճի խնդիրը, որի արդյունքում կիրճն «այլևս ահաբեկիչների ապաստարան չի հանդիսանում»:

Ըստ երևույթին, պրն Բաուչերի հայտարարությունն ավելի շուտ հավասարակշռող, քան թե շտկող ենթատեքստ ուներ, որն ամենևին էլ չի փոխում ամերիկյան արտաքին քաղաքական գիծը: Վերլուծաբանների մի մասը ԱՄՆ դեսպանի հայտարարությունը կապեց Բեսլանի իրադարձությունների հետ, որոշ լրագրողներ էլ նշեցին, թե Միացյալ Նահանգները որոշել է «Վրաստանը տալ Ռուսաստանին», իսկ սեպտեմբերի 15-ին ռուսական *Независимая газета*-ում հրապարակված «*Ռիչարդ Մայլզի պանկիսյան թվարանությունը*» հոդվածում մասնավորապես նշված էր. «… ԱՄՆ դեսպան Ռիչարդ Մայլզը ռուս զինվորականներին փաստացի ցույց տվեց ահաբեկիչների ռազմակայանների վրա կանխարգելիչ հարվածների հավանական ուղղություններից մեկը»:

Հետևություններ

- Կովկասում տեղի է ունենում ռազմականացման գործընթաց, որը պարունակում է տարածաշրջանի ապակայունացման միտումներ,
- վրաց-հարավօսական հակամարտության գոտում նկատելի է իրադրության ժամանակավոր սառեցում, ինչը չի բացառում հետագա (թերևս, նոյեմբերի 2-ին ԱՄՆ կայանալիք նախագահական ընտրություններից հետո) սրացումները,

- Վրաստանում ակտիվանում են ներկայիս վարչակարգի նկատմամբ ընդդիմադիր կեցվածք որդեգրած ուժերը,
- վրաց-օսական հակամարտության վերջին սրացման ժամանակ նկատելի եղավ վրաց-ամերիկյան առաջին լուրջ հակասությունը։

Իրավիճակի զարգացման հավանական սցենարներ

Վրաց-հարավօսական հակամարտությունը կարող է շարունակական, քրոնիկ բնույթ ստանալ։ Վրաստանի իշխանությունները կփորձեն միջազգային հանրությանն ապացուցել ՀՕՀ-ում ռուսական խաղաղապահների «անարդյունավետ» գործունեությունը և արևմտյան գերտերությունների ճնշման ներքո վրաց-հարավօսական հակամարտությունից դուրս բերել ռուսական կողմին կամ նվազեցնել վերջինիս ազդեցությունը։

Իր հերթին՝ Ռուսաստանը փորձելու է պահպանել իր ազդեցությունը և հարավօսական հակամարտությամ միջոցով ճնշումներ բանեցնել պաշտոնական Թբիլիսիի վրա։

Լայնածավալ ռազմական գործողությունների վերսկսումը Վրաստանի իշխանությունների կողմից գրեթե անհավանական պետք է համարել, քանի որ Վրաստանի հաղթանակը ՀՕՀ զինված ուժերի նկատմամբ, ինչպես ցույց տվեցին ս.թ. ամռան զարգացումները, առայժմ հավանական չէ։

Վրաստանում առկա սոցիալ-տնտեսական խնդիրները հետզհետե (հատկապես առաջիկա ձմռանը) ավելի են անհանգստացնելու երկրի ղեկավարությանը։ Այդ խնդիրների արագ չկարգավորումը բավականին մոտ ժամանակներս կարող է հանգեցնել ժողովրդի շրջանում Մ.Սահակաշվիլու և նրա համախոհների որոշակի հեղինակազրկմանը։ Քիչ հավանական է, որ այդ հեղինակազրկումը հանգեցնի իշխանափոխության, սակայն այն կարող է բացասաբար անդրադառնալ հարավօսական խնդրում պաշտոնական Թբիլիսիի դիրքերի վրա։

Թերևս, առաջիկա ժամանակահատվածում Հարավային Կովկասում ԱՄՆ-ն չգնա Ռուսաստանի հետ բացահայտ առճակատման և շարունակի ամրապնդել իր դիրքերը Կենտրոնական Ասիայում։ Սպիտակ տան՝ ամերիկյան ռազմական ուժերի վերատեղակայմանը վերաբերող զեկույցում առանձին կետով շեշտվում էր Հյուսիսարևելյան և Հարավարևելյան Ասիայի նշանակությունը ԱՄՆ ազգային անվտանգության տեսանկյունից։

Պաշտոնական Մոսկվան, հանդես գալով որպես վրաց-հարավօսական հակամարտության միջնորդ և ձեռք բերված պայմանավորվածությունների երաշխավոր, ձգտելու է պահպանել իր *բացառիկ* ազդեցությունը հակամարտության գոտում։

Դեռևս 2002թ. ընդունված ռազմավարական նոր հարաբերությունների վերաբերյալ Պուտին-Բուշ համատեղ հռչակագրում հստակ նշվում էր, թե Ռուսաստանն ու ԱՄՆ-ը համագործակցելու են տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման հարցում, որոնց թվին էին դասվում Աբխազիան, Լեռնային Ղարաբաղը, Մերձդնեստրը, *սակայն նշված չէր Հարավային Օսիայի մասին*: Ռուսաստանն այսօր, թերևս, շահարկի այն դրույթը, ըստ որի՝ Վաշինգտոնը դեռևս այդ ժամանակ էր համաձայնել, որ Հարավային Օսիան գտնվում է *միայն Ռուսաստանի* շահերի ոլորտում:

Թեև ՀՕՀ իշխանությունները բազմիցս են արտահայտել իրենց ցանկությունը միանալ Հյուսիսային Օսիային ու ընդգրկվել ՌԴ կազմում, այնուհանդերձ, քիչ հավանական է, որ առաջիկայում Մոսկվան այդ հարցը դնի իր օրակարգում: Ռուսական կողմը, թերևս, շարունակելու է հանդես գալիս Վրաստանի տարածքային ամբողջականության պահպանման *(de jure)* օգտին:

Հավանական մարտահրավերները՝ ՀՀ ազգային անվտանգության տեսանկյունից

Կովկասում վերջին ամիսներին տեղի ունեցող քաղաքական գործընթացները տարածաշրջանային իրադրությունն ապակայունացնող բնույթ են կրում: Տարածաշրջանը ռազմականացվում է, և այստեղ առկա հակամարտություններից որևէ մեկի ակտիվացումն ուղղակի թե անուղղակի բացասական ազդեցություն է ունենալու Հայաստանի ազգային անվտանգության վրա:

Ռազմաքաղաքական առումով հարավօսական հակամարտության ակտիվացումը կարող է նպաստել, ղարաբաղյան հիմնախնդիրը վերստին շահարկվի և այդպիսով, կարծես թե, լեգիտիմացվի պատերազմական գործողությունների վեսկսման դրույթը:

Նույն տրամաբանությամբ, վրացական իշխանությունների փորձերը լուծել երկրի առջև ծառացած տարածքային ամբողջականության խնդիրը, մեծացնելու են իրենց բացասական ազդեցությունը (առաջին հերթին հոգեբանական և մտածելակերպի մեջ փոփոխությունների առումով) ադրբեջանական հասարակությունում, Բաքվի վերնախավում, ինչը կարող է հանգեցնել Լեռնային Ղարաբաղի հակամարտության որոշակի ակտիվացմանը:

Հարավօսական խնդիրը կարող է սրել ազգային հարցը Վրաստանում, ինչն անուղղակի վտանգ է նույն՝ Վրաստանի, այդ երկրում բնակվող մոտ 400 հազ. Ադրբեջանցիների և գրեթե նույնքան էլ հայության համար: Խնդիրը հատկապես սուր է իսլամ դավանող ադրբեջանցիների պարագայում, որոնք ի տարբերություն քրիստոնեություն դա-

վանող վրացիների, ունեն ժողովրդագրական (դեմոգրաֆիական) աճի բավականին բարձր ցուցանիշներ։

Հարավօսական հակամարտությունը բացասաբար է անդրադառնում Հայաստանի տնտեսական անվտանգության վրա։ Ռուսական իշխանությունների կողմից «Վերին Լարս» անցակետի ժամանակավոր փակումը արդեն իսկ ունեցել է իր բացասական ազդեցությունը հայրենի տնտեսական դաշտի վրա։

Կարեն Վերանյան

Հավելված № 1

Վրաստանի ԶՈՒ-ի ընդհանուր բնութագիրը

Տարբեր տվյալների համաձայն, Վրաստանի Զինված ուժերի (ԶՈՒ) կանոնավոր կազմի թվաքանակը կազմում է շուրջ 22000-26000 զինծառայող: Դրանք կազմված են ցամաքային զորքերից, ռազմաօդային, ռազմածովային և հակաօդային պաշտպանության գնդերից ու ստորաբաժանումներից: Ռազմականացված կառույցները ներառում են ոստիկանությունը, անվտանգության ուժերը, սահմանապահ և ներքին զորքերը: Վրաստանի մոբիլիզացիոն կարողությունները հաշվվում են շուրջ 1430 հազ. մարդ, այդ թվում և զինծառայությանը պիտանի կարողությունը՝ շուրջ 1120 հազ. մարդ: 1998թ. երկրի ռազմական բյուջեն կազմել է $27 մլն:

Վրաստանի ցամաքային ուժերը

Վրաստանի ցամաքային զորքերը դեռևս գտնվում են ձևավորման փուլում: Դրանք կազմված են առանձին մոտոհրաձգային, տանկային, հրետանային գնդերից ու ստորաբաժանումներից: Ցամաքային զորքերի սպառազինությունը ներառում է հիմնական մարտական *T-55* և *T-72* տեսակի 79 տանկեր, շուրջ 100 այլ զրահամեքենաներ (զրահապատ փոխադրիչ մեքենաներ՝ *БТР-70* և *БТР-80* տեսակի), ինչպես նաև *БМП-1* և *БМП-2* տեսակի (հետևակի մարտական մեքենա), 92 հրետանային հրանոթներ (ներառյալ՝ 120 մմ-ոց ականանետերը):

Ռազմաօդային (ՌՕՈՒ) և ռազմածովային (ՌԾՈՒ) ուժերը

Վրաստանի ՌՕՈՒ-ի ստորաբաժանումներն ունեն 6 *Су-25* տեսակի գրոհիչներ, մարտական *Ми-24* տեսակի 3 ուղղաթիռներ և ուսումնա-վարժական *L-29* տեսակի 10 ինքնաթիռներ: Վրաստանի ռազմածովային ուժերը իրենց կազմում ունեն *206MR* տեսակի մի քանի մոտորանավակ, *Вихре* նախագծի 1 մոտորանավ, 2 դեսանտային և 3 պահակային մոտորանավ, մեկ հատ ականազերծիչ նավ:

Փորձագիտական գնահատականների համաձայն, Վրաստանի զինված ուժերը առանձնանում են բավականին ցածր մարտունակությամբ: Ազգային բանակի հետ կապված գրեթե բոլոր խնդիրները վրացական իշխանությունները կապում են Միացյալ Նահանգների և ՆԱՏՕ-ի հետ: «Ուսուցում և զինում» ծրագրի շրջանակներում (ծրագրի իրականացմանը հատկացվել էր շուրջ $64 մլն) ամերիկացի հրահանգիչները Վրաստանում վերապատրաստեցին պայմանագրային զինծառայողների երեք գումարտակ՝ Վազիանիի 11-րդ մոտոհրաձգային բրիգադի 113-րդ «Շավնաբադա» գումարտակը, երկու գումարտակներ՝ «կոմանդոս» բազայում (ըստ որոշ տեղեկությունների, ծովային հետևակի գումարտակը տեղակայված է Փոթիում), և Սաչխերյան լեռնահրաձգային հատուկ նշանակության 16-րդ գումարտակը (Արևմտյան Վրաստան): Ներկայում ամերիկացի հրահանգիչներն անցել են չորրորդ գումարտակի պատրաստման աշխատանք-

ներին՝ Թելավիի 111-րդ տանկային գումարտակի բազայում: Նախատեսվում էր ծրագիրն ավարտի հասցնել մինչև 2004թ. մայիս ամիսը:

Մինչև 2015թ. Վրաստանում ծրագրվում է ստեղծել 12 հազարանոց արհեստավարժ զինված ուժեր: Այդ ծրագրերը, հատուկ նշանակության զորքերի ստեղծումից բացի, ներառում են նաև տանկային վաշտի, մոտոհրաձգային ու լեռնային գումարտակների, ինչպես նաև ԶՈՒ ապահովման, ղեկավարման ու վերահսկման համակարգի, երկրի ՊՆ շրջանակներում ղեկավարման և իրավիճակների ծրագրավորման ազգային կենտրոնի (առաջինը տարածաշրջանում) ստեղծումը: Վրաստանի ԶՈՒ դեռևս գտնվելով ռազմավարական ծրագրավորման մակարդակի վրա՝ ըստ ամենայնի, ձևավորվելու են ոչ այնքան պետական սահմանների պաշտպանության համար (այս խնդիրը Թբիլիսին պատրաստվում է լուծել, առաջին հերթին, Հյուսիսատլանտյան դաշինքի անվտանգության կառույցներում երկրի հետագա ինտեգրման միջոցով), որքան երկրում գոյություն ունեցող տարբեր հավանական կենտրոնախույս շարժումների ու այլ կարգի ուժերի դեմ պայքարելու նպատակով:

Մոտոհրաձգային գնդերի տեղակայումը

Թբիլիսի՝ 11-րդ բրիգադ,

Քութաիսի՝ 12-րդ բրիգադ,

Ախալցիխա՝ 22-րդ բրիգադ:

Հատուկ նշանակության գնդերի տեղակայումը

Թբիլիսի՝ աջագ արձագանքման առանձին գումարտակ,

Սաչխերի՝ 16-րդ լեռնահրաձգային գումարտակ:

Ռազմաօդային ուժերի տեղակայումը

Քութաիսիի մոտ գտնվող «Կոպտինարի» օդանավակայան՝ ինքնաթիռներ,

Թբիլիսի, Թելավի՝ մարտական ուղղաթիռներ (ամերիկյան *UH-1 Irokez* տեսակի տաս և երկու թուրքական ուղղաթիռներ):

Ռազմա-ծովային նավատորմի տեղակայումը

Փոթի (տրանսպորտային նավեր, ականազերծիչ նավ, դեսանտային, տորպեդային և սահմանապահ մոտորանավակներ):

Հավելված № 2

Վրաստանում առկա ռուսական ռազմակայանների կազմն ու տեղակայումը

Վրաստանում ռուսական զորքերի թվակազմը կազմում է շուրջ 8 հազար զինծառայող, 153 տանկ, 241 զրահամեքենա, 140 հրետանային համակարգեր: Դրանք հիմնականում կենտրոնացված են 12-րդ (Բաթում) և 62-րդ (Ախալքալաք) ռազմական բազաներում: Բացի այդ, ինչպես արդեն նշվել է, ռուսական երեք խաղաղապահ գումարտակ (1 600 զինծառայող և 100 միավոր զրահատեխնիկա) տեղակայված է Աբխազիայում, մեկ գումարտակը (600 զինծառայող և 50 միավոր զրահատեխնիկա)՝ Հարավային Օսիայում:

Ռուսական 12-րդ ռազմակայանի կազմում, որը ձևականորեն ենթարկվում է Ռուսաստանի Պաշտպանության նախարարությանը, ծառայում են հիմնականում Ռուսաստանի քաղաքացիություն ունեցող աջարներ: Բաթումում տեղակայված 12-րդ ռազմակայանը նախկին 145-րդ մոտոհրաձգային դիվիզիան է՝ իր ողջ անձնակազմով ու սպառազինությամբ: Այս ռազմական բազանները գտնվում են մարտունակության բարձր մակարդակի վրա: 12-րդ բազայի գնդերում ծառայում է 150 ռուս սպա և 2 000 պայմանագրային զինծառայող, որից շուրջ 1800-ը տեղի բնակչության ներկայացուցիչներ են: 12-րդ ռազմական բազայի նախկին հրամանատարն էր գեներալ-մայոր Վյաչեսլավ Բորիսովը: Ռազմակայանում պահվում է *T-72* տեսակի 41 տանկ և շուրջ 60 հաուբից:

62-րդ ռուսական ռազմակայանն ընդգրկում է՝

147-րդ մոտոհրաձգային դիվիզիան,
421-րդ մոտոհրաձգային գունդը,
817-րդ ինքնագնաց հրետանային գունդը,
899-րդ կապի առանձին գումարտակը,
65-րդ առանձին հակատանկային դիվիզիան,
176-րդ առանձին վերանորոգման-վերականգնման գումարտակը:

12-րդ ռուսական ռազմակայանն ընդգրկում է՝

145-րդ մոտոհրաձգային դիվիզիա,
25-րդ մոտոհրաձգային գունդը,
115-րդ առանձին տանկային գումարտակը,
1089-րդ ինքնագնաց հրետանային գունդը և ռազմական մեքենավերանորոգման գործարանը:

Այլ գնդեր ու օբյեկտներ

- Սագարեջո՝ հրետանային զինամթերքի բազա և ինժեներական պահուստ:
- Մսխեթի՝ Կոջորիի պահեստային հրամանատարական կետ (կապի ցանց):

- Թբիլիսի՝ ռուսական զորքերի խմբի շտաբ, պահպանության ու ապահովման 364-րդ առանձին գումարտակ։
- Նյութական ապահովման 149-րդ առանձին գումարտակ, 142-րդ զրահատանկային վերանորոգման գործարան։
- Խելլաչաուրի՝ 90-րդ մոտոհրաձգային գունդ։
- Գուդաութի՝ 1107-րդ զենիթա-հրթիռային գունդ (խաղաղապահ առանձին գումարտակ. մտնում է ռազմադեսանտային զորքերի 72-րդ դիվիզիայի կազմի մեջ)։
- Ցխինվալիի գունդը. մտնում է ռազմադեսանտային զորքերի 72-րդ դիվիզիայի կազմի մեջ։

Հավելված № 3

Հարավային Կովկասի ռազմական հավասարակշռությունը

Հայաստանի ռազմատեխնիկական կարողությունները. ընդհանուր պատկեր													
		1991	*1992*	*1993*	*1994*	*1995*	*1996*	*1997*	*1998*	*1999*	*2000*	*2001*	*2002*
տանկեր	թույատրված	220	220	220	220	220	220	220	220	220	220	220	220
	իրական		77	154	102	102	102	102	102	102	102	110	110
զրահամե-քենաներ	թույատրված	220	220	220	220	220	220	220	220	220	220	220	220
	իրական		189	379	285	285	218	218	218	204	204	146	140
հրետանային միավորներ	թույատրված	285	285	285	285	285	285	285	285	285	285	285	285
	իրական		160	259	225	225	225	225	225	225	229	229	229
ռազմական ինքնաթիռներ	թույատրված	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100
	իրական		3	3	6	6	6	6	6	6	6	6	6
ռազմական ուղղաթիռներ	թույատրված	50	50	50	50	50	50	50	50	50	50	50	50
	իրական		13	4	7	7	7	7	7	7	7	7	8
մարդուժ	թույատրված											60000	60000
	իրական											44618	44667
Աղբյուր՝ SIPRI Yearbooks 1991-2003. Conventional arms control: Վերջին թարմացումը՝ հուլիս 2003թ.:													

Ադրբեջանի ռազմատեխնիկական կարողությունները. ընդհանուր պատկեր													
		1991	*1992*	*1993*	*1994*	*1995*	*1996*	*1997*	*1998*	*1999*	*2000*	*2001*	*2002*
տանկեր	թույատրված	220	220	220	220	220	220	220	220	220	220	220	220
	իրական	134	278	336	285	275	270	270	270	262	220	220	220
զրահամեքենաներ	թույատրված	220	220	220	220	220	220	220	220	220	220	220	220
	իրական	113	338	947	835	810	557	557	557	331	210	210	210
հրետանային միավորներ	թույատրված	285	285	285	285	285	285	285	285	285	285	285	285
	իրական	126	294	388	343	336	301	301	301	303	282	282	282
ռազմական ինքնաթիռներ	թույատրված	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100
	իրական	15	50	53	58	49	48	48	48	48	48	48	54
ռազմական ուղղաթիռներ	թույատրված	50	50	50	50	50	50	50	50	50	50	50	50
	իրական	9	6	8	18	15	15	15	15	15	15	15	15
մարդուժ	թույատրված											70000	70000
	իրական											69966	64824
ծանոթագրություն	ծրագրվում է ներկրել ևս 100 տանկ և 100 զրահապատ մեքենա												
Աղբյուր՝ SIPRI Yearbooks 1991-2003. Conventional arms control: Վերջին թարմացումը՝ հուլիս 2003թ.:													

Վրաստանի ռազմատեխնիկական կարողությունները. ընդհանուր պատկեր		1991	1992	1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002
տանկեր	թույատրված իրական	220 77	220 75	220 41	220 39	220	220 79	220 79	220 79	220 79	220 79	220 90	220 86
զրահամեքենաներ	թույատրված իրական	220 28	220 49	220 51	220 49	220	220 102	220 102	220 111	220 113	220 113	220 114	220 108
հրետանային միավորներ	թույատրված իրական	285 0	285 24	285 7	285 27	285	285 92	285 92	285 107	285 106	285 109	285 109	285 110
ռազմական ինքնաթիռներ	թույատրված իրական	100 0	100 4	100 2	100 2	100	100 6	100 6	100 7	100 7	100 7	100 7	100 7
ռազմական ուղղաթիռներ	թույատրված իրական	50 0	50 3	50 1	50 1	50	50 3	50 3	50 3	50 3	50 3	50 3	50 3
մարդուժ	թույատրված իրական											40000 40000	40000 24584
Աղբյուր՝ SIPRI Yearbooks 1991-2003. Conventional arms control: Վերջին թարմացումը՝ հուլիս 2003թ.:													

«Եվրոպայում սովորական սպառազինությունների մասին պայմանագիրը» (ԵՍՍՊ) ստորագրվել է 1990թ. նոյեմբերի 19-ին Վիեննայում (Ավստրիա): Պայմանագիրն ուժի մեջ է մտել 1992թ. հուլիսի 17-ին: ԽՍՀՄ-ի և «Վարշավայի համաձայնագրի» փլուզումից, Չեխոսլովակիայի մասնատումից և Գերմանիայի վերամիավորումից հետո պայմանագրի մաս դարձան 30 պետություն, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունը:

Վերոնշյալ աղյուսակում Հարավային Կովկասի երկրներին թույլատրված սպառազինությունների քանակը հիմնվում է «Եվրոպայում սովորական սպառազինությունների մասին պայմանագրի» վրա:

Տվյալներ՝ Հարավային Օսիայի և Աբխազիայի ռազմական կարողությունների վերաբերյալ

հանրապետություն	հիմնական կազմը (մարդ)	տանկեր	մարտական մեքենաներ	Հրետանային համակարգեր
Հարավային Օսիա	մոտ 2 000	մոտ 10	մոտ 30	մոտ 25
Աբխազիա	մոտ 5 000	ավելի քան 50	ավելի քան 80	ավելի քան 80
Աղբյուրը՝ The Military Balance 2002/2003, International Institute for Strategic Studies, London.				

Աբխազիայի ԶՈւ ընդգրկում են նաև 20 հատ ռազմանավ (ըստ՝ Akhali Taoba № 124, May 8, 1998, The Army and Society in Georgia, May 1998, The Military Balance 1998/1999, International Institute for Strategic Studies, London):

Հավելված № 4

Վրաստանի առափնյա պահպանության նավատորմը կազմը

Առափնյա պահպանություն

Նավեր	
նավերի տեսակները	նավերի քանակը
Tarantal պարեկանավ (130'-long fast)	1
Grif class պարեկանավ (79'-long)	5
Aist class զրահապատ նավակներ (156'-long)	4
հետախուզական ռազմանավեր	2
ԱՄՆ առափնյա պահպանության Sea Arc ռազմանավեր (U.S. Coast Guard Sea Arc) (42'-long)	2
Աղբյուրները՝ The Military Balance 1998/1999, International Institute for Strategic Studies, London. Irakli Aladashvili, «Marine Borders Need Immediate Defense», The Army and Society in Georgia, July 1998.	

Վրաստանի ԶՈՒ-ի ենթակայության տակ գտնվող ԽՍՀՄ սպառազինությունը

սպառազինություն	Վրաստանում ԽՍՀՄ ռազմական տեխնիկա	Վրաստանի ԶՈՒ-ին ենթական ռազմական տեխնիկա
ինքնաթիռներ/ուղղաթիռներ	318	1 ինքնաթիռ/ 12 ուղղաթիռ
ռազմանավեր/նավեր	133	0
տանկեր/հետևակի մարտական մեքենաներ	2 620	320
զնդացիրներ	152 290	10 265
հրետանի	2 950	485
փամփուշտ	4 040 վագոն	230
Աղբյուրը՝ Droni № 41, 14-16 April 1998, The Army and Society in Georgia, Apr. 1998.		